

բառի ստորոտը, կամ ցրում գանգան աշխարհամասերու մէջ, ամուր եւ գօօրաւոր գաղութներով:

Այն ահաւոր ողբերգութեան յիսնամեակին առիթով, որդիներն ու քոները այն սիրելի, օրհնեալ ու անպարտելի հերոսներուն, Մասիսի հովիտէն մինչեւ հեռաւոր հիւրընկալ երկիրներու մէջ, միանուագ նուիրումով կ'ոգեկոչեն, կը փառաւորեն ու կը խնկաւտեն այսօր իրենց հայրերուն յիշատակը, կ'աղօթեն անոնց համար, կը վերապրին անոնց կտակը, որ քրջուած է արիւնով ու նուիրագործուած մահով. կտակը՝ հաւատարիմ մնալու Քրիստոսի եւ սեփական պատմութեան: Անոնք կը նորոգեն երկաթեայ առաջադրանքը՝ ապրելու եւ իրենց յաջորդներուն փոխանցելու այդքան փառապանծ ժառանգութիւն, շարունակելով բերել՝ ամենայն ուղղամտութեամբ՝ իրենց համեստ աշխատակցութիւնը ի բարգաւաճումն զիրենք հիւրընկալող երկիրներուն, անխորտակելի վստահութեամբ՝ թէ օր մը պիտի կարենան ամէնքը հաւաքուիլ հայրենի գաւառներուն մէջ, իրականացնելով երազը մեծցած Հայրենիքի մը, որ պիտի բանայ իր դռները բոլոր իր գաւակներուն առջեւ, ուր ազատ պիտի բլլայ պաշտամունքը Աստուծոյ, Քրիստոսի, որ քաղաւորն է բոլոր ազգերուն, զարգացնելու համար հայկական մշակոյթը այն բոլոր տարրերով որ նշմարիտ է, գեղեցիկ է, մեծ ու ազնուական, համայն ազգերու համամուագին մէջ:

Վերջ դնելով այս համեստ խօսքերուն, ԲՈՅՈՒՆ տրուի ինծի յայտարարել թէ հայ ժողովուրդը խորապէս երախտագէտ ու շնորհապարտ է բոլոր անոնց, որ մարդկային ու քրիստոնէական համերաշխութեան ոգիով աւուրցան, կը ձայնակցին այս ոգեկոչումին:

Նախ եւ առաջ, մեր որդիական երախտագիտութիւնը կ'ուղղուի դէպի գահոյքը Պօղոս Զ. Սրբազան Քահանայապետին, որ գերագոյն ջատագովն է թէ՛ անհատներու եւ թէ՛ ժողովուրդներու մարդկային ու աստուածային իրաւունքներուն, եւ որ առանձնապատու բարեացակամութեամբ, ինքնագիր սրբազան նամակով մը, ուղղուած մեր Ամենապատիւ Պատրիարքին, կը հանձնարէ Տանարին մէջ սուրբ պատարագ մատուցուէր նոյն Ամնպտ. Պատրիարքին, ի ներկայութեան եւ մասնակցութեամբ ժողովական բոլոր Հայրերուն, ի յիշատակ մեր գոհերուն: Սրբգ. Քահանայապետը հանեցաւ նաեւ անձամբ ներկայ գտնուիլ այդ արարողութեան: Շնորհակալ ենք, Սրբազան Հայր:

Հուսկ հանելի պարտականութիւն մըն է մեզի, յանուն իտալիոյ Հայ Թեմին Վսեմ. Ծիր. Արքեպիսկոպոսին, Մետրապոլիտական Աւագանիին, Կղերին ու հաւատացեալներուն, իրենց ազնիւ ու սիրայօժար մասնակցութեան համար՝ այս եզակի տօնակատարութեան: Խորապէս կը յուզէ մեզ ասիկա. եւ յիշատակը անջինջ պիտի մնայ մեր սրտերուն մէջ:

Պիտի շարունակենք այժմ արարողութիւնը հաշտարար ու քաջարար Ս. Պատարագի Զոհին, ու ջերմեանդօրէն պիտի բարձրացնենք մեր աղօթքը խաղաղութեան եւ բարօրութեան համար իտալիոյ, որ խանգարուբքն է ա՛յնքան մշակոյթներու, սրբութեան, դիւցազնական օրինակներու, եւ յատկապէս Արքեպիսկոպոսական հռչակաւոր այս Թեմին համար, որ միշտ աւելի ծաղկի ու պտղաբերէ, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ, ի փրկութիւն հոգիներու, եւ ի մխիթարութիւն իր եռանդուն Հովուապետին:

Թրգմն. Հ. Ն.

ԱՊՐԵԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԵՇԱՏԱԿԸ

Ս. ՂԱԶԱՐԻ ՄԷՋ

19 ԱՊՐԵԼ 1965

Օր մեռելոց, Միլիթարեան վանքին համար՝ նուիրում Ապրիլեան բերաւոր հաստակներու խնկելի յիշատակին:

Ս. Ղազարի տաճարին մէջ, ահաւոր ողբերգութեան մը յուշումով տրամաթախիծ, սուրբ Պատարագ կը մատուցուի: Վանականներ, աղագիւններ, վանաւորներ եւ շրջակայ քաղաքներէն, մինչեւ անգամ Միլիթան ու Հոռմէն, կ'աղօթեն մըր տամբով. հաստակներու զաւակներ ու թոռներ են շատեր. կան նաեւ հաստակներու եղբայրներ: Հայկական շարականին հետ խունկը կը բարձրանայ կամարներէն վեր. բոլորին սրտերն են որ անգամ մը եւս կը զոհարենք Սասունոյ, հաստակներու սուրբ յիշատակին ոգեկոչումով խանդավառ. անոնց հաւատքն ու կտակը անգամ մըն ալ կը ծաղկի հողիներէն ներս, եւ իւրաքանչիւրն իր սուրբ յաղթանակի վերածած, կը հայցէ Հայոց աշխարհին համար խաղաղութիւն, սէր, միութիւն, ննջեցելոց արքայութիւն...:

Պատարագը աւարտած է: Սկիզբ կ'առնէ օրուան յիշատակին նուիրումը երկրորդ արարողութիւնը:

Հանդիսականները արդէն իսկ տեղ վերաւած են վանքի եկեղեցւոյն դռներէն մէջ, ուր բացուած պիտի կատարուի փոքրիկ յուշարձանի մը, հաստակներու յիշատակին ձօնուած խաչքարի մը:

Վանքին Ընդհ. Արքեպիսկ. Գրգ. Վանքի վրդ. Կէտիկեանի հետ հանդէսին կը յետևի Վրդ. Կէտիկեանի հետ հանդէսին կը յետևի Վրդ. Սրապիոն Արքեպիսկ. Նախագահ Գրգ. Սրապիոն ունենալով Ուրուհոնեան, իրենց շուրջն ունենալով վանքի բոլոր միաբանները: Մուրաւ-Ռաւ-Վանքի բոլոր միաբանները: Մուրաւ-Ռաւ-Վանքի վարժարանի աշակերտութիւնը յետեւեալ է իր Տեղակալն եւ ուսուցչական ներկայ է իր Տեղակալն եւ ուսուցչական մարմնով: Միլիթանի զաւակներէն՝ Տիար Ստեփան Սրապեան, Նախագահ Իտալահայ



Նահատակներու խաչքարը

Գաղութային Միութեան, Բժ. Մանուկ Խոնափեալն ու Բժ. Պարոյր Մարտիկեան կը ներկայացնեն Մուրաւ-Ռաւ-Վանքի իտալիոյ նախկին աշակերտներու Միութիւնը: Իտալիոյ Հայոց Մշակութային Միութիւնը կը մասնակցէր հետեւեալ հեռագրով. «1915ի մեծ եղեռնի յիսնամեակին առիթով Հայաստանէն արտասահման Հայութիւնը կը խոնարհի նահատակաց յիշատակին առջեւ յուշումնալից. մասնակից ենք Ս. Ղազարու սուրբ արարողութեանց» (Միլիթան, 24 Ապրիլ): Անհատական հեռագիր մըն ալ կը բերէր մասնակցութիւնը նոյն Միութեան Պատուարժան Նախագահին, Բժ. Արամայիս Սրապեանի. «1915ի մեծ եղեռնի յիսնամեակին առիթով տեղի

